Դարույր Սևակ

Սուրճի գավաթի դիմաց

Դու մի հորինված էակ ես գուցե
Ու հանդիպել ես ինձ մտքումըս լոկ:
Բայց իրական ես, ինչպես բուրմունքը
Հողի՛,
Վարունգի՛,
Խոտի՛,
Մատիտի՞:
Եվ ես ուզում եմ, որ շրջապատես
Ինձ ա՛յդ բույրերով,
Լոկ ա՛յդ բույրերով՝
Հողի՛,
Վարունգի՛,
Խոտի՛,
Մատիտի՞՝
Բույրով մանկության,
Բույրով մաքրության…
Ի՞նչ զարմանալի աչքեր ունես դու.
Կարծես թե լինեն երկվորյակ լճեր
Հին հրաբխի գույգ խառնարանում:
Ի՞նչ հրաշագործ նայվածք ունես դու.
Ինչի նայում ես՝ քե՞զ ես նկարում:

Ծոծրակդ կարծես մթին անտառի բացատ է գողտրիկ,
Ուր սփռված են միայն հասմիկներ:
Մազերիդ բույրից
Հին աստվածներն են հարություն առնում
Դամբանում իրենց՝
Ռունգներում իմ տաք:
Քնքշորեն ասված ամեն խոսքը քո
Եթեր է ճամփում ռադիոալիքներ,
Որոնց կարող է ամե՛ն ոք որսալ,
Ով երջանկության տառերը գիտի:
Քո նայվածքի հետ
Ինքըդ քեզանից զատվում - անջատվում,
Բազմապատկում ես ինքդ քեզ կարծես՝
Շարժանկարի ժապավենի պես,
Որ… հազարնե՛րը հիանան՝ ձրի՛:
…Հազարի՛ նման մի աղջիկ ես դու,
Ում գտել եմ ես՝ մեկըս հազարից,
Եվ հիմա `
Քեզնից աստծո՛ւ չափ հեռու,
Նստած եմ ահա տխուր-երջանիկ
Ու դեռ փակ կրծքիդ տաք կաղապարով՝
Ճերմակ գավաթով, սև սուրճ եմ խմում,
Որ անքնությունն իր բույնը հյուսի
Լարված ջղերիս մերկ ծառի վրա:
Ու եթե մեկը սուրճով բախտ բացեր,
Ապա կարող էր գուշակել անսուտ,
Որ ես ինքնակամ ու սիրահոժար
Մնացած կյանքիս կեսը կտայի,
Միայն տեսնեի գրկիդ… թուխ մանուկ,
Ինչպես որ քեզ եմ իմ գրկում տեսել…

11.III.1964թ.
Դիլիջան